ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանում

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1. Արտասահմանում ՀՀ առևտրական ներկայացուցիչների (կցորդների) *և* առևտրական ներկայացուցչությունների համակարգի իրավիճակի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչները (կցորդները) և առևտրական ներկայացուցչությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական շահերը օտարերկրյա պետություններում, գործում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը կից՝ վերջինիս ընդհանուր քաղաքական ղեկավարությամբ: Իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են միջազգային իրավունքի նորմերով, այդ պետության հետ Հայաստանի Հանրապետության կնքած համապատասխան միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության օրենսդրություններով և «Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների» կանոնադրությամբ:

ա) ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի համակարգի ընդհանուր նկարագիրն ու խնդիրները

Առևտրի համաշխարհային կազմակերպությունում (այսուհետ՝ ԱՀԿ) ՀՀ մշտական ներկայացուցչության ինստիտուտը ստեղծվել է ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 17-ի N 173-Ն «Առևտրի համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշմամբ (նստավայրը՝ Ժնև):

ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական շահերը ԱՀԿ-ում: ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միջազգային իրավունքի նորմերով, ԱՀԿ համապատասխան փաստաթղթերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, անհրաժեշտության դեպքում, ԱՀԿ նստավայր պետության օրենսդրությամբ, ինչպես նաև ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի կանոնադրությամբ: ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը անհրաժեշտության դեպքում կարող է իրականացնել նաև Ժնևում տեղակայված Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գործառույթները, ինչպես նաև ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովում և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության գործունեության հետ կապված անհրաժեշտ աշխատանքներ:

բ) Եվրոպական Միությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ՀՀ առևտրական ներկայացուցչուների համակարգերի ընդհանուր նակարագիրն ու խնդիրները:

ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 10-ի N 136-Ն «Եվրոպական Միությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների հաստիքներ ստեղծելու մասին» որոշմամբ ստեղծվեցին ՀՀ առևտրական ներկայացուցչի երկու հաստիքներ՝

- *Եվրոպական Միությունում ՀՀ առևտրական ներկայացուցչի հաստիք, նստավայրը՝ Բրյուսել,*
- *Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՀՀ առևտրական ներկայացուցչի հաստիք, նստավայրը՝ Վաշինգտոն:*

ՀՀ վարչապետի 2017թ. ապրիլի 4-ի 328–Ա որոշման համաձայն Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում նշանակվել է Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդ:

Եվրոպական Միությունում ՀՀ առևտրական կցորդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միջազգային իրավունքի նորմերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՄ համապատասխան փաստաթղթերով: Եվրոպական Միությունում ՀՀ առևտրական կցորդը բացի հիմնական գործառույթներից ու խնդիրներից ապահովում է նաև Եվրոպայի Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության – OECD հետ Հայաստանին առնչվող ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգումը, Ստանդարտացման եվրոպական կոմիտեին ՀՀ անդամակցությունից բխող աշխատանքների իրականացումը, Բենիլյուքսի երկրներում Հայաստանի դեսպանատան կողմից իրականացվող առևտրատնտեսական բնույթի աշխատանքները:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՀՀ առևտրական ներկայացուցչի հաստիքում դեռևս նշանակումը կատարված չէ:

1.2. Վերջին երեք տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

<u>ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը</u> 2017թ., 2018թ. և 2019թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված համապատասխանաբար 68131.5, 73261,9 և 72168,3 հազար դրամ պահպանման ծախսերով իրականացնում է ԱՀԿ քարտուղարության և ԱՀԿ կոմիտեների հետ ընթացող ամենօրյա աշխատանքները, ապահովում է ԱՀԿ շրջանակներում ՀՀ կողմից իրականացվող գործընթացների շարունակականությունը և արդյունավետությունը:

ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը ակտիվ և հետևողական մասնակցություն է ապահովել ԱՀԿ «Դոհայի զարգացման օրակարգի» շրջանակներում ընթացող առևտրի ազատականացման բանակցություններին, այդ շրջանակներում ձևավորված բանակցային խմբերի աշխատանքներին:

2018թ. ընթացքում շարունակվել են քննարկումները և նախնական բանակցությունները ԱՀԿ քարտուղարության և ԱՀԿ անդամ երկրների հետ, Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության գործընթացի համատեքստում ԱՀԿ շրջանակներում ընթացող մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի ՀՀ պարտավորությունների փոփոխությունների նպատակով:

2018թ. ընթացքում շարունակվել և ավարտվել են աշխատանքները Առևտրի համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առևտրային քաղաքականության վերաքննության զեկույցների պատրաստման և ամփոփիչ նիստերին ներկայացման, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» համաձայնագրի փաստացի ներկայացման ուղղությամբ:

Կատարվել է ԱՀԿ քարտուղարության կողմից ներկայացված, ինչպես նաև քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ ԱՀԿ անդամ երկրների կողմից պարբերաբար ներկայացվող առաջարկությունների և բանաձևերի ուսումնասիրություն, ներկայացվել և պաշտպանվել է ՀՀ պաշտոնական դիրքորոշումը քննարկվող և բանակցվող տարաբնույթ հարցերի վերաբերյալ:

ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը աշխատանքներ է իրականացնում նաև Ժնևում տեղակայված մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), ինչպես նաև Միջազգային առևտրի կենտրոնի (ITC) հետ համագործակցության ուղղությամբ:

«Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանման 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտով» նախատեսվող ֆինանսական միջոցներ անհրաժեշտ են նույն մակարդակով աշխատանքների իրականացման, ԱՀԿ շրջանակներում Հայաստանի առևտրատնտեսական շահերի պաշտպանության ապահովման և ընթացող զարգացումներին առավել ընդգրկուն մասնակցության ապահովման համար:

<u>Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական կցորդը</u> 2017թ., 2018թ. և 2019թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված համապատասխանաբար 46722,6, 50243,0 և 49493,0 հազար դրամ պահպանման ծախսերով իրականացնում է «Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների» կանոնադրությամբ ամրագրված գործառույթները, որոնք ուղղված են եղել ՀՀ-ԵՄ համագործացության ամրապնդմանը և համագործակցության շրջանակների ընդլայնմանը:

Եվրամիության շրջանակում կատարված աշխատանքը բազմազան է և, ըստ էության, այն կարելի է բաժանել հետևյալ հիմնական ուղղությունների՝ ՀՀ-ԵՄ Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրից բխող աշխատանքների իրականացում, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ-CEPA) բանակցային գործընթացից բխող աշխատանքների իրականացում,

Եվրամիության Արևելյան Գործընկերության նախաձեռնության ներքո ընթացող գործընթացներին շարունակական մասնակցության ապահովում, հատկապես «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի շրջանակներում, ՀՀ-ԵՄ երկկողմ առևտրատնտեսական համագործակցության հետագա ձևաչափի և իրավական շրջանակների ձևավորման գործընթացին մասնակցություն, Եվրամիության կառույցների հետ ընթացիկ աշխատանքային գործընթացի ապահովում, Եվրամիության անդամ պետությունների և գործընկեր երկրների ներկայացուցիչների հետ համագործակցության ապահովում:

Հետևողական աշխատանքներ են իրականացվում Հայաստանին ԵՄ կողմից կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար տրամադրվող «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի նոր փուլին Հայաստանի մասնակցության ապահովման ուղղությամբ, (2014թ. հունվարից Հայաստանը հնարավորություն ստացավ օգտվելու «GSP+» ռեժիմի նոր փուլից): ԵՄ-ում ՀՀ առևտրական կցորդը ապահովում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շահերի ներկայացումը և պաշտպանությունը համապատասխան կառույցներում:

«Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանման 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտով» նախատեսվող ֆինանսական միջոցներ անհրաժեշտ են նույն մակարդակով աշխատանքների իրականացման, ինչպես նաև ՀՀ-ԵՄ գոյություն ունեցող հարաբերությունների, երկկողմանի հետաքրքրության ոլորտներում համագործակցության ապահովման և զարգացման նպատակով:

<u>Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդը</u> 2017թ., 2018թ. և 2019թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված 41762,4, 42412,7 և 42719,1 հազար դրամ պահպանման ծախսերով իրականացնում է «Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների» կանոնադրությամբ ամրագրված գործառույթները, որոնք ուղղված են հայ-չինական երկկողմ համագործացության շրջանակների ընդլայնմանն ու ամրապնդմանը:

2017թ., 2018թ. և 2019թ. ՀՀ պետական բյուջեով Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՀՀ առևտրական ներկայացուցչին գումար չի հատկացվել:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) ԱՀԿ-ում Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական շահերի ներկայացում,

բ) ԱՀԿ հետ Հայաստանի Հանրապետության աշխատանքների իրականացմանն աջակցություն,

գ) ԱՀԿ-ում ընթացող գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ԱՀԿ-ին առնչվող այլ տեղեկությունների ներկայացում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին,

դ) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հանձնարարությամբ ԱՀԿ-ի և ՀՀ համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ աշխատանքային կապերի ապահովում:

ՀՀ-ն հանդիսանալով ԱՀԿ լիիրավ անդամ երկիր, ստանձնել է որոշակի պարտավորություններ, որոնց իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան աշխատանքներ ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՀԿ անդամ երկրների պատվիրակությունների/ներկայացուցիչների և ԱՀԿ Քարտուղարության հետ: Նշված աշխատանքների պատշաճ իրականացմանն էապես նպաստում է ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը, որի առօրյա աշխատանքը՝ մասնակցությունը ԱՀԿ մարմինների հանդիպումներին, ԱՀԿ անդամ պետությունների համապատասխան ներկայացուցիչների և ԱՀԿ Քարտուղարության փորձագետների հետ հնարավորություն է տալիս օպերատիվ և բազմակողմանի տեղեկատվություն ապահովել այս կամ այն հարցի վերաբերյալ ՀՀ բանակցային դիրքորոշման ձևավորման և, համապատասխանաբար՝ ՀՀ շահերի պաշտպանության հարցում:

Առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի և փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցության զարգացմանն ու խորացմանն աջակցություն,

բ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը նպաստում,

գ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում,

դ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար կապերի հաստատմանն աջակցություն և նրանց միջև համագործակցության իրականացման հարցում անհրաժեշտ աջակցության ցուցաբերում:

Ընդհանուր առմամբ համակարգի գործունեությունը նպատակաուղղված է Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև տնտեսական քաղաքականության արտաքին հատվածի առաջնայնությունների, մասնավորապես՝ արտահանման խթանմանն ու ներդրումների ներգրավմանն ուղղված աշխատանքների իրականացմանը:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը	Ժամ-կետը	
ՀՀ առևտրատնտեսական շահերի ներկայացում և պաշտպանություն օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում	***04.01.01***	-	-	*անժամկետ*	-	*անժամկետ*	**Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացում, մասնավորապես՝ արտահանման խթանում և ներդրումների ներգրավում** ***ՀՀ կառավարության ծրագիր (5.5 և 5.6 բաժիններ)***
x	*x*	*x*	*x*	*x*	*x*	*x*	*x*

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանման համակարգի գործունեությունը նպատակաուղղված է Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև տնտեսական քաղաքականության արտաքին հատվածի առաջնայնությունների, մասնավորապես՝ արտահանման խթանմանն ու ներդրումների ներգրավմանն ուղղված աշխատանքների իրականացմանը:

	Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար			***Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին***
	2020	2021	2022	
1	**ԱՀԿ-ում Հայաստանի տնտեսական շահերի ներկայացում ու պաշտպանություն, Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացում**			1. ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 17-ի «Առևտրի համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի կանոնադրությունը հաստատելու մասին» N 173-Ն որոշում: 2. ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի

2	**ՀՀ առևտրատնտեսական քաղաքականության զարգացում ու խթանում, արտահանման խթանմանն ու ներդրումների ներգրավմանն ուղղված աշխատանքների իրականացում**	«Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդների և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը հաստատելու մասին» N 1935-Ն որոշում: 3. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդների, ներկայացուցիչների, մաքսային կցորդի և Առևտրի Համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 22.09.2005թ. N 1587-Ն որոշում: 4. ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 10-ի «Եվրոպական Միությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների հաստիքներ ստեղծելու մասին» N 136-Ն որոշում: 5. ՀՀ Վարչապետի 2017թ. հուլիսի 26-ի «Տ. Դավթյանին Առևտրի համաշխարհային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ նշանակելու մասին» N 844-Ա որոշում: 6. ՀՀ Վարչապետի 2018թ. դեկտեմբերի 5-ի «Վ. Սիմոնյանին Եվրոպական Միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդ նշանակելու մասին» N 1624-Ա որոշում 7. ՀՀ վարչապետի 2017թ. ապրիլի 4-ի «Հրանտ Աբաջյանին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդ նշանակելու մասին» N 328-Ա որոշում

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

4.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը

1. «ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»,
2. «Եվրոպական միությունում ՀՀ առևտրական կցորդի պահպանման ծախսերի ծրագիր»,
3. «ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»,

4. «ՉԺՀ-ում ՀՀ առևտրական կցորդի պահպանման ծախսերի ծրագիր»:

Գոյություն ունեցող ծրագրերի (պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը ներկայացված են ՄԱՍ 4-ի հավելված 1-ում:

Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

«Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանման ծրագրով» նոր նախաձեռնություններ չկան, ուստի ՄԱՍ 4-ի N 3, 4 և 5 հավելվածներով նախատեսված աղյուսակները չեն լրացվել:

Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտներ (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների) չկան, ուստի ՄԱՍ 4-ի N 6 հավելվածով նախատեսված աղյուսակը չի լրացվել:

Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր

Արտասահմանում առևտրական ներկայացուցչությունների պահպանման ծրագրի պարագայում կիրառելի չէ:

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր չկան (ուստի՝ ՄԱՍ 4-ի N 7 հավելվածով նախատեսված աղյուսակը չի լրացվել):

Ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2020-2022թթ. ժամանակահատվածի համար

Ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 8-ում:

ՄԺԾԾ հայտի հետ կապված ռիսկերը

ՄԺԾԾ հայտի հետ կապված ռիսկեր չկան:

ՄԱՍ 4. ՄԺԾԾ ՀԱՅՏԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1

Աղյուսակ. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2020-2022թթ. ծախսերի կանխատեսում (ամփոփ)

(հազ. ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերն իրականացնող պետական մարմինների անվանումը	Ծրագրերի ցանկը (անվանումը)	2019թ. բյուջե	Կանխատեսում		
						2020թ.	2021թ.	2022թ.
4	1	1	ՀՀ ՏՋՆՆ	Ընդամենը ՊՄ 1, որից	**231874,5**	**235533,0**	**235533,0**	**235533,0**
				Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր				
				Ծրագիր 1 «ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»	72168,3	74139,0	74139,0	74139,0
				Ծրագիր 2 «Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական կցորդի հ պահպանման ծախսերի ծրագիր»	49493,0	52120,0	52120,0	52120,0
				Ծրագիր 3 «ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»	67494,1	64539,0	64539,0	64539,0
				Ծրագիր 4 «ՉԺՀ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»	42719,1	44735,0	44735,0	44735,0

Հավելված N 2

Ծախսային ծրագրի անվանումը. **«Արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերի ծրագիր»**

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման Բաժինը, Խումբը, Դասը և Ծրագրի համարը. **04.01.01 Ծրագիր 04**

Ծրագիրն իրականացնող պետական մարմնի անվանումը. **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

Աղյուսակ Ա. 2020 թվականի ժամանակահատվածի համար ընթացիկ բնույթի գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ըստ առանձին ծրագրերի

		Գումարը (հազ. դրամ)	Տվյալ գործոնի կանխատեսվող մեծությունը	Նկարագրություն (հիմնավորում)
Ա	**Ծառայությունների մատուցումը (միջոցառումների իրականացումը) բազային տարվա (2018 թվական) ծավալով, որակով և գներով**	**222263.6**	x	
Բ	**Ծառայությունների մատուցումը (միջոցառումների իրականացումը) բազային տարվա (2019 թվական) ծավալով, որակով, սակայն բյուջետավորվող տարվա գներով (Տող 'Ա' + տող Բ1.1 + տող Բ1.2 + տող Բ 1. ... + տող Բ2.1 + տող Բ2.2 + տող Բ 2. ...)**	**231874,5**	x	
	այդ թվում	x	x	

		Գումարը (հազ. դրամ)	Տվյալ գործոնի կանխատեսվող մեծությունը	Նկարագրություն (հիմնավորում)
	<u>2019 թվական</u>	***+9610.9***	x	
Բ 1.1	ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր	-1093,6	-1,5 %	2019թ. համար 1093.6 հազար դրամ պահպանման ծախսերի նվազումը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տատանումներով
Բ 1.2	Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական կցորդի պահպանման ծախսերի ծրագիր	-750,0	-1,5 %	2019թ. համար 750,0 հազար դրամ պահպանման ծախսերի նվազումը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տատանումներով
Բ 1.3	ՉԺՀ-ում ՀՀ առևտրական կցորդի պահպանման ծախսերի ծրագիր	+306,4	+0,7 %	2019թ. համար 306,4 հազար դրամ պահպանման ծախսերի ավելացումը 2018թ. տարվա նկատմամբ պայմանավորված է եղել ծառայողական պարտականությունների կատարմամբ պայմանավորված գործուղումների ծախսերի ավելացմամբ, կապի, տրանսպորտային և կոմունալ ծառայությունների սակագների ավելացմամբ:
Բ 1.4	ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր	+ 11148,1	+19,8 %	-
	<u>2020 թվական</u>	***+3658,5***	x	
2.1	ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր	+ 1970,7	+ 2,7%	2020թ. համար 1970,7 հազար դրամ պահպանման ծախսերի ավելացումը 2019թ. տարվա նկատմամբ պայմանավորված է գործուղումների ծախսերի ավելացմամբ, կապի, տրանսպորտային և կոմունալ ծառայությունների սակագների ավելացմամբ:
2.2	Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական կցորդի	+ 2627,0	+5,3%	2020թ. համար 2627,0 հազար դրամ պահպանման ծախսերի ավելացումը

		Գումարը (հազ. դրամ)	Տվյալ գործոնի կանխատեսվող մեծությունը	Նկարագրություն (հիմնավորում)
	պահպանման ծախսերի ծրագիր			2019թ. տարվա նկատմամբ պայմանավորված է գործուղումների ծախսերի ավելացմամբ, կապի, տրանսպորտային և կոմունալ ծառայությունների սակագների ավելացմամբ:
2.3	ՉԺՀ-ում ՀՀ առևտրական կցորդի պահպանման ծախսերի ծրագիր	+ 2015,9	+4,7%	2020թ. համար 2015,9 հազար դրամ պահպանման ծախսերի ավելացումը 2019թ. տարվա նկատմամբ պայմանավորված է գործուղումների ծախսերի ավելացմամբ, կապի, տրանսպորտային և կոմունալ ծառայությունների սակագների ավելացմամբ:
Բ 2.4	ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր	- 2955,1	-4,4%	-

<u>Աղյուսակ Բ. 2020-2022 թթ. ժամանակահատվածի համար ընթացիկ բնույթի գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ըստ առանձին ծրագրերի</u>

(ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր)

		Գումարը (հազ. ՀՀ դրամ)	Տվյալ գործոնի կանխատեսվող մեծությունը	Նկարագրություն (հիմնավորում)
Ա	**2020 թվականի հայտ**	**74139.0**	x	
Բ	**2021 թվականի հայտ**	**74139.0**	x	
	այդ թվում	x	x	
Բ 1	*<u>Գնային գործոններ</u>*			
Բ 1.1	Այլ ընթացիկ ծախսեր	-	-	-
Բ 2	*<u>Այլ գործոններ</u>*			
Գ	**2022 թվականի հայտ**	**74139.0**	x	
	այդ թվում	x	x	
Գ 1	*<u>Գնային գործոններ</u>*			
Գ 1.1	Այլ ընթացիկ ծախսեր	-	-	-

Հավելված N 8

Աղյուսակ Ա. Ոլորտի (համակարգի) գծով 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2020-2022թթ. ՄԺԾԾ հետ

(հազար դրամներով)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Ոլորտի գծով ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի որոշմամբ 2020-2022թ. ճշգրտված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները	-	-	-	-
2. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ոլորտի համար սահմանված ընդհանուր հատկացումները	**231874.5**	-	-	-
3. Ոլորտի գծով գոյություն ունեցող ծրագրերի ծախսերի և ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (բացի ՀՀ քաղաքաշինության նախարարության ՄԺԾԾ հայտում ընդգրկված ոչ ֆինանսական ակտիվների կառուցման և հիմնանորոգման գծով ծախսերի ծրագրերից)	-	**235533.0**	**235533.0**	**235533.0**
4. ՀՀ քաղաքաշինության նախարարության ՄԺԾԾ հայտում ընդգրկված ոչ ֆինանսական ակտիվների կառուցման և հիմնանորոգման գծով ծախսերի ծրագրեր	-	-	-	-
5. Ընդամենը (տող 3+ տող 4)		**235533.0**	**235533.0**	**235533.0**
6. Տարբերությունը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից		**+ 3658.5**	**+ 3658.5**	**+ 3658.5**
7. Տարբերությունը ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի որոշմամբ 2020-2022թթ. ճշգրտված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից	-	-	-	-

Ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2020-2022թթ. համար

(հազար դրամներով)

	2020թ.	2021թ.	2022թ.
Ոլորտի գծով գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը	**235533.0**	**235533.0**	**235533.0**
Ոլորտի գծով նախատեսվող նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը			
ԸՆԴԱՄԵՆԸ	**235533.0**	**235533.0**	**235533.0**

Հավելված N 9

2020-2022թթ. ժամանակահատվածում պետական մարմնի կողմից իրականացվող աոփոփ ծախսերը (միջոցառումները) ծրագրային դասակարգմամբ

_(հազար դրամ)

Ծրագրային դասիչը		**Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)**	**Ծրագիր/միջոցառում**	**2019թ. բյուջե**	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**
Ծրագիրը	**Միջոցառումը**						
04.01.01	**ԾՐԱԳԻՐ**						
			Արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծրագիր	**231874,5**	**235533.0**	**235533.0**	**235533.0**
			Ծրագրի նկարագրությունը				
			Արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների/ներկայացուցչությունների				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			պահպանմանում				
			Վերջնական արդյունքի նկարագրությունը				
			ա. Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական շահերի ներկայացում. բ. Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի և փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցության զարգացմանն ու խորացմանն աջակցություն. գ. Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը նպաստում, դ. Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում, ե. Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար կապերի հաստատմանն աջակցություն և նրանց միջև համագործակցության իրականացման հարցում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերում:				
	Միջոցառումներ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
	ԱԾ 01		**«ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության պահպանման ծախսերի ծրագիր»**	72168,3	74139,0	74139,0	74139,0
			Մատուցվող ծառայության նկարագրությունը				
			ա) ԱՀԿ-ում Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական շահերի ներկայացում. բ) ԱՀԿ հետ Հայաստանի				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			Հանրապետության աշխատանքների իրականացմանն աջակցություն. գ) ԱՀԿ-ում ընթացող գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ԱՀԿ-ին առնչվող այլ տեղեկությունների ներկայացում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին, դ) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հանձնարարությամբ ԱՀԿ-ի և ՀՀ համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ աշխատանքային կապերի ապահովում:				
			Ծառայություն մատուցողի անվանումը				
			ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ				
	ԱԾ 02		**«Եվրոպական միությունում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման**	49493,0	52120,0	52120,0	52120,0

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			ծախսերի ծրագիր»				
			Մատուցվող ծառայության նկարագրությունը				
			ա) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի և փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցության զարգացմանն ու խորացմանն աջակցություն. բ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը նպաստմանը, գ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում, դ) Հայաստանի				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար կապերի հաստատմանն աջակցություն և նրանց միջև համագործակցության իրականացման հարցում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերում:				
			Ծառայություն մատուցողի անվանումը				
			Եվրոպական միությունում ՀՀ առևտրական ներկայացուցիչ				
			«ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»	67494,1	64539,0	64539,0	64539,0
			Մատուցվող ծառայության նկարագրությունը				
			ա) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի և փոխշահավետ առևտրատնտեսական				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			համագործակցության զարգացմանն ու խորացմանն աջակցություն. բ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը նպաստում, գ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում, դ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար կապերի հաստատմանն աջակցելը և նրանց միջև համագործակցության իրականացման				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			հարցում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերում:				
			Ծառայություն մատուցողի անվանումը				
			ԱՄՆ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչ				
			«ՉԺՀ-ում ՀՀ առևտրական ներկայացուցչի պահպանման ծախսերի ծրագիր»	42719,1	44735,0	44735,0	44735,0
			ա) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի և փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցության զարգացմանն ու խորացմանն աջակցություն. բ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը նպաստում,				

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (Բաժին/Խումբ/Դաս)	Ծրագիր/միջոցառում	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ծրագիրը	Միջոցառումը						
			գ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության միջև բազմակողմանի տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստում, դ) Հայաստանի Հանրապետության և դեսպանընկալ պետության տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար կապերի հաստատմանն աջակցելը և նրանց միջև համագործակցության իրականացման հարցում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերում: Ծառայություն մատուցող անվանումը ՉԺՀ-ում ՀՀ առևտրակ ներկայացուցիչ				